

01.12.23 - 01.12.23

10:00

Անցանց

Գրանցումը փակ է



[Պահպանել Google օրացույցում](#)

ԵՊՀ Պալեանների անվան դահլիճ

Ս.թ. դեկտեմբերի 1-ին ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում կանցկացվի ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և Ռաուլ Վալենբերգի անվան մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի կողմից կազմակերպվող «Մարդու իրավունքների հետազոտությունը Հայաստանում. արդի և նոր ձևավորվող հիմնախնդիրներ» խորագրով միջազգային գիտաժողովը:

Գիտաժողովի նպատակն է հարթակ տրամադրել համալսարանականներին, իրավապաշտպաններին և քաղաքականություն մշակողներին՝ համատեղ ուսումնասիրելու Հայաստանում մարդու իրավունքների արդի և նոր ձևավորվող խնդիրները:

Գիտաժողովին մասնակցելու համար ընտրված հետազոտողներին հնարավորություն կտրվի շարունակական աջակցություն ստանալու 2024 թ. և դրամաշնորհների, միջազգային հետազոտական այցերի և փոխանակումների միջոցով զարգացնելու իրենց հետազոտությունները: Ընտրված մասնակիցները հնարավորություն կունենան հրապարակելու իրենց հետազոտությունները:

Նրանք, ովքեր հողված չեն ներկայացնելու, սակայն ցանկություն ունեն գիտաժողովին ներկա գտնվելու, կարող են գրանցվել՝ անցնելով հետևյալ հղումով՝ <https://forms.office.com/e/uj277JKvpq>

Գիտաժողովին առջվող այլ մանրամասների ծանոթանալու համար կապ հաստատել david.eile@rwi.lu.se էլիասցեի միջոցով:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am